

ՎԵՆԵՏԱՀԱՅՈՑ ԵՒ ԳՐՈՂ

ՋԱՔԱՐԻԱ ՇԵՀՐԻՄԱՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ

(ԱԿՆԱՐԿ)

Արեւմտեան Եւրոպայում Իտալիան էր այն երկիրը, ուր միջին դարերից ի վեր առաւել շատ ներթափանցեցին հայ ժողովրդի տարազիր շերտեր եւ նշանակալից դեր կատարեցին նրա տնտեսական ու մտաւորական կեանքում:

Իտալական Վերածննդի շրջանում, երբ Հայաստանը հիւժուում էր մոնղոլական բարբարոսական ցեղերի արշաւանքներից, Բիւզանդական կայսրութեան և Վենետիկեան հասարակապետութեան դեռեւս ծաղկման շրջանում, երբ տեղի ունեցաւ Ռուբինեան հայկական պետականութեան անկումը, եւ աւելի ուշ՝ Շահ-Աբասի բռնի դաշտը, բնաւեր դարձած, հողմածեծ հայութեան առանձին զանգուածներ աստիճանաբար հաստատուում էին իտալական քաղաքներում՝ Հռոմում, Ֆլորենցիայում, Միլանում, Ճենովայում, Նեպոլում, Պիզայում, Վենետիկում, Պարմայում, Պադուայում, Վերոնայում եւ այլուր: 12-19րդ դարերում՝ իտալական շուրջ 40 քաղաքներում ապրում էին Հայեր, որոնք իրենց արդիւնաւոր գործերով վայելում էին տեղացիների համակրանքն ու բարեկամութիւնը:

Նկատենք, նաեւ, որ Արեւմտեան Եկեղեցու ներկայացուցիչները կրօնական տեսակէտներով էին ստանձնել վտարանդի հայութեան հովանաւորի դերը: Հայ աշխարհական ու եկեղեցական դասերի հեռատես ներկայացուցիչները, հաշուի առնելով այդ տեսակէտները, խոհեմաբար օգտւում էին եւրոպացի լուսամիտ հիւրընկալների հովանաւորութիւնից, եւ գործում էին հայրենիքից հեռու՝ նրա յարատեւութեան ու առաջադիմութեան նշանաբանով:

Իտալական վերոյիշեալ քաղաքներից Վենետիկին էր վիճակուած մեծ դեր կատարելու հայ-իտալական յարաբերութիւնների միջին եւ նոր դարերի պատմութեան մէջ: 12-13րդ դարերից ի վեր, յատկա-

պէս 16-19րդ դարերում, Հայերն այստեղ բացառիկ կշիռ ունէին: Լինելով աշխարհի ծովային վաճառաշահութեան հզօր կենտրոններից մէկը, Վենետիկն իր շուրջն է համախմբում Հայաստանի եւ հայաշատ պարսկական, թուրքական քաղաքների (Ջուղա, Սպահան, Ղաֆան, Ագուլիս, Կ. Պոլիս եւ այլն) տարազիր վաճառականների ու արհեստաւորների առանձին խմբեր եւ դառնում հայ վաճառականութեան մի առանձնաշնորհ գաղթավայր: Վենետիկեան դրամատենքում մեծ չափերի էր հասնում հայ վաճառականների ոսկին: Այստեղ ստեղծւում են հայ վաճառականական խոշոր տներ, միջազգային առեւտրական յարաբերութիւնների մէջ մտած հայ առեւտրական գրասենեակներ: Տնտեսական այս վիճակը, բնականաբար, նպաստում է վենետահայութեան, եւ ոչ միայն վենետահայութեան, ազգային մշակոյթի զարգացմանը, հայ մտաւոր կեանքի առաջադիմութեանն՝ առհասարակ: «Առաջին հայ վաճառականաց նպատակն յատուկ իրենց եւ իրենց քնիկ հայրենեաց եւ ընտանեաց շահն էր, գրում է Ղ. Ալիշանը, վերջնաց՝ իրենց ընտանեաց ի նոր հայրենիս, ի վեմետիկ որոյ, ուրիշ կերպով այլ, արուեստներով եւ աշխատութեամբ՝ այլ եւ այլ տեսակ շահ, օգուտ եւ վայելիք հայքայրեցիմք»:

Հայ ժողովրդի տնտեսական, իրաւաքաղաքական ընդհանուր կացութիւնը և մասնաւորապէս վենետահայոց իրաւատնտեսական կեանքը ծնում են հայ-վենետեան գրական, գիտական ու կրթական բազմաթիւ նշանակալից երեւոյթներ: Իտալական հողի վրայ գործում են հարիւրաւոր հայ մտաւորականներ, պետական, զինուորական ծառայողներ, վաճառականներ, նաւաշինարարներ, արհեստաւորներ, թարգմանիչներ, տպագրիչներ, գրիչներ, նկարիչներ, բժիշկներ, քանդակաւորներ, իրաւաբաններ, պատմագիրներ, գրողներ, արուեստագէտներ, ուսուցիչներ: Դրանցից շատերը հայ եւ ընդհանուր հասարակական մտքի եւ մշակոյթի պատմութեան մէջ թողել են անշնչելի հետք: Յունական կայսերական զօրքերի հռչակաւոր զօրավար Ներսէս Պատրիկի (5-6րդ դդ.) անուան հետ է կապւում Վենետիկում հայկական առաջին եկեղեցու եւ գրատան ստեղծումը. նշանաւոր ճանապարհորդներ՝ Մարտիրոս Երզնկացին (1491-1497), Սիմէոն Լեհացին (1611-1619) շրջում են Եւրոպայում եւ կարեւոր տեղեկութիւններ հաղորդում նաեւ Վենետիկի մասին: Յակոբ Մեղապարտը 1512 թուականին Վենետիկում հիմնադրում է հայկական առաջին տպարանը, հրապարակ հանում հայերէն առաջին տպագիր գիրքը, հայերէն աշխարհիկ բանաստեղծութեան առաջին տպագիր նմոյշները: Անտոն Սուրեանը (1559-1591) իր նաւաշինական բացառիկ գիւտերով եւ Վենետիկի 1577 թ. համաճարակը կանգնելու իր բժշկական

դեղամիջոցներով փրկարար դեր է կատարում վենետիկի հասարակության համար եւ մեծ ժողովրդականութեան արժանանում: Վենետիկի բնակիչ Պաչատուր Դաւրիժեցին պարսկերէնից խտաբէնի թարգմանելով նշանաւոր մի երկ՝ «Ուղեւորութիւն երկից քրդաւոց Սեբեդիպալայ արքային» (տպ. 1557) հայերէն առաջարանում (իր թարգմանութեամբ) կարեւոր մանրամասնութիւններով եւ կենդանի արուեստով նկարագրում է վենետիկ քաղաքը ու նրա բարքերը: Յովհաննէս եւ Պաչատուր հայր եւ որդի Տէրզնցիները (16-17րդ դդ.) վենետիկում հիմնադրում են հայերէն նոր տպարան եւ հայ մշակոյթին անգնահատելի ծառայութիւն մատուցում: Պաչատուր Թոխաթցին (1614 թ.) վենետիկի մասին գրած իր սքանչելի ոտանաւոր-պատմութեամբ («Յարմարեալ պատմութիւն վենետիկոյ, փաֆի ի շատէ ակամատես եւ ոչ ակամջալուր լեալ») ճանաչում է գտնում նաեւ իտալական դրականութեան մէջ: Պաչատուր էրզրումեցին (վենետիկի Ս. Պաչ եկեղեցու առաջնորդը՝ 1708-1740 թթ.) իր աստուածաբանական, գիտա-փիլիսոփայական ու տեսական բազմազատոր աշխատութիւններով հաղորդակից է դարձնում Հայերին եւրոպական նոր գիտութեան ու արուեստի նուաճումներին: Իսրայէլ Օրին իր քաղաքական-ազատագրական ծրագրերի իրականացման ճանապարհին գործակցում է նաեւ վենետիկացի ազատամիտ վաճառականների հետ: Ղափանի հերոսական մարտերի մասնակից Ստեփանոս Շահումեանը վենետիկում է շարադրում «Դաւիթ Բէկի պատմութիւնը»²: Վիկտորիա Աղանուրն իր նրբագեղ քնարական երգերով երկրորդ Ադա-Նեգերին է ճանաչում իտալահայ դրական միջավայրում եւ այլն:

2. Վենետիկացի վաճառականական նշանաւոր ընտանիքների մէջ՝ Գալֆայեան, Գարազաբեան, Ալեքսանեան, Թոքաճեան, Մարտիրոսեան եւ այլք, իրենց հասարակական դիրքով առանձնանում են երկուսը՝ Ղափանցի Շահումեանների եւ Ջուլայեցի Շահրիմանեանների կամ Շահրիմանեանների ազգատոհմերը: Այստեղ միայն նշենք, որ Շահումեան տոհմի ամենապայծառ դէմքը պատմագիր Ստեփանոս Շահումեանն է, Դաւիթ Բէկի զինակիցը, որ պատերազմից յետոյ հայրենիքից մեկնում է վենետիկ՝ իր ազգակից վաճառականների մօտ եւ գործակցում նրանց: Այստեղ է նա գրում. «Ընտիր Պատմութիւն Դաւիթ Բէկին եւ պատերազմաց հայոց իտալիայում, որք եղեմ ընդդէմ քուրդացի մերում ժամանակի» երկը: Ստեփանոս Շահումեանը եղել է Միսթարեան Միսթարեանի բարեբաւորներից մէկը. 1736 թուականին նա փր եւ իր ազգակիցների ջանքերով պատրաստել է տալիս Ս. Ղազարի վանքի Ս. Գրիգոր Լուսաւորչին նուիրուած ճոխ ու զարդարուն խորանը, իսկ 1736 թուականին խորանի առջեւում՝ իրենց դամբարանը՝ համապատասխան արձանագրութեամբ. «Վկայէ եւ հայրս մեր Միսթար արքայ, զի երեքին պայազատքն Շահումեանը՝ Ստեփանոս Վարդանիսեան, Ջաքար որդի Դաւիթ եւ Նահապետ որդի Պողոսի, յամի 1736 ետուն շինել յեկեղեցւոյ վանաց իւրոց (ի Ս. Ղազար կղզւոյ) վայելուչ խորան մի պատկերօք հանդերձ, յանուն Ս. Լուսաւորչի, եւ ապա (1737) առաջի սեղանոյն պատրաստ-

18րդ դարում վենետիկը Հայոց մշակութային կեանքի տարեգրութեան մէջ է մտնում նշանակալից մի նոր, աննախատիպ երեւոյթով: Դարասկզբում այստեղ է հաստատում Միսթարեան հուշակաւոր Միսթարեանութիւնը, որն օտար հողում երբեւէ ծնուած ու գործող կրօնա-ազգային Միսթարեանութիւնների մէջ ամենակենսունակն է ու ամենադիտակաւնը: Անգնահատելի է Միսթարեանների դերը հայ վերանորոգման շրջանի դրականութեան, դասական լեզուի, բառարանագիտութեան, պատմագիտութեան, ուսումնա-կրթական, լուսաւորական շարժման զարգացման, հայ թատրոնի, թարգմանական դրականութեան ստեղծման եւ այլ բնագաւառներում: Միսթարեան Միսթարեանութիւնը համաշխարհային ճանաչում է գտնում իր հարուստ պատկերասրահներով, հազուագիւտ, բազմատեսակ թանգարանային հաւաքածոներով, միջնադարեան հայերէն ձեռագրերի ընտիր մատենադարանով, հնատիպ հայկական եւ եւրոպական, արեւելեան լեզուներով հարուստ գրադարաններով եւ այլն³:

Այնթիւ են ու բազմատեսակ հայ կեանքի հետ կապուած վենետիկեան հին եւ նոր պատմական յիշատակները: 6-10րդ դարերում գործող Ս. Թէոդորոս եկեղեցին կառուցուած է եղել վենետիկի կենտրոնում, որի զանգակատան յիշատակասիւնը՝ Թէոդորոս զօրավարի

տեցին զտապան հանգստարանի իւրեանց, արկեալ ի վերայ կափարիչ վէժ կարմիր կճեայ քառակուսի (մի չափ հաւասար) եւ արձանագրեալ այսպէս.

Ղափանցի Շահումեանց տամ,
Պարոմ Զաֆարմ, որ է Դաւթեան,
Պարոմ Ստեփան վարդապետեան,
Պարոմ Նահապետմ Պողոսեան,
Ետուն շինել գայս սուրբ սեղան,
Եւ ընդ միմ գայս դամբարան,
Ի յիշտակ եւ ի կայան,
Բնուից որք եմ միւզք մայմայ տամ:

Ղ. Ալիշանը հաստատում է, սակայն, որ այս դամբարանի տակ հանգչում է Շահումեանց տան երեք պայազատներից մէկը միայն՝ Նահապետ Պողոսեանը (1758): Ստեփանոս Շահումեանի մահուան տարեթիւը յայտնի չէ, տեղեկութիւններ կան, որ նա մինչեւ 1750ական թուականները ապրել է վենետիկում (Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսակամ, վենետիկ, 1893, էջ 301):

3. Միսթարեան Միսթարեանութեան հրաւերով 1974 թուականի Յուլիոս եւ Օգոստոս ամիսները անցկացրի վենետիկում, Ս. Ղազարում, պտոյտներ ունեցայ Հոսմում, Միլանում, Ֆլորենցիայում, Պարմայում, Պադուայում: Օգոստոսի առիթից՝ ես իմ խորունկ չորհրդակալութիւնն եմ յայտնում Միսթարեան Միսթարեանութեան Ընդհանրական Արքայ, գիտնական Հ. Պողոս Վ. Անանեանին եւ բոլոր միսթարեաններին, ինչպէս նաեւ պարմացի հայազէտ Օրիորդ Գաբրիէլա Ուլուհոճեանին՝ իմ նկատմամբ ցուցաբերած այն առանձնայատուկ հոգատարութեան ու խնամքի եւ այն մեծ բաւականութեան համար, որ ես ստացայ իմ չընդադալութիւնների ժամանակ՝ արուեստի երկիր իտալիայում:

արձանաքանդակով, կանգուն է եւ այսօր՝ Դքսերի հռչակաւոր պալատի ձախ կողմում՝ Վենետիկի հասարակապետութեան խորհրդանիշը ներկայացնող յիշատակասեանը զուգահեռ։ Առաւել հին է Ս. Մարկոսի տաճարի դադաթին կանգնած հեթանոսական շրջանի պղնձաձոյլ ձիաքանդակների վրայ փորագրուած հայերէն յիշատակագրութիւնը։ Ռուբինեան թագաւորութեան անկումից յետոյ, առաւելապէս Վենետիկում, աշխուժանում է հայ վաճառականական եւ արհեստավարական կեանքը։ Նոյն Ս. Մարկոսի հրապարակում հայերն ունեցել են յատուկ վաճառասեղաններ եւ աչքի ընկել իրենց ազնիւ առեւտրով եւ բարքով։ Այդ դարերում քաղաքի Ս. Յուլիանոսի նշանաւոր թաղամասում հայերը վենետիկցիներից նուէր են ստանում «Հիւրատուն», որը կոչւում էր «Հայոց տուն»։ այստեղ են հանգրուանում Վենետիկ եկող-գնացող պանդուխտ եւ աղքատ Հայերը։ Քաղաքի ցամաքային մասի կենտրոնում է գտնուում եւ Հայոց փողոցը, Հայոց կամուրջը, Հայոց Ս. Խաչ եկեղեցին, որ կառուցուել է 1203 թուին եւ գործում է մինչեւ այսօր։ Վենետաւայութիւնը 1579 թուին ստեղծում է նաեւ իր առանձին Սահմանադրութիւնը, որով ղեկավարւում է Հայերի ներքին ազդային կեանքը։ Քիչ չեն նաեւ գեղարուեստի այլ տեսակի յուշարձանները։ Հայ եւ իտալական մի շարք եկեղեցիներում պահպանւում են հայ քարերարների արձանագիր դամբարաններ, հայ եւ իտալացի նկարիչների, քանդակագործների կողմից զարդարուած խորաններ, մատուռներ, հայկական պատմական եւ եկեղեցական թեմաներով մոզայիկ պատկերներ, որմնանկարներ, զարդաքանդակներ։

* * *

18րդ դարի վենետաւայոց տնտեսական ու մշակութային կեանքի պայմաններում, ահա, ազգերի ընդհանուր առաջադիմութեան նոր եւրոպական ընթացքի մէջ, Վենետիկում հանդէս է գալիս հայազգի մի նշանաւոր գրող-փիլիսոփայ, որին վիճակուած էր գլխի դեր կատարելու իտալական ժամանակակից պատմութեան մէջ։ Դա Ջաքարիա Շեհրիմանեանն էր։

17-18րդ դարերի վենետաւայոց վաճառականական դասի եւ, ընդհանրապէս, հայ վաճառականութեան մէջ հռչակուած է եղել Շեհրիմանեանների ընտանիքը։ Դժբախտաբար այս երեւելի ազգատոհմի պատմութիւնը, մեզանում, դեռեւս անհրաժեշտ չափով չի հետազոտուած։ Պատմագիտութիւնից յայտնի է, որ այդ դարերում Շեհրիմանեաններն իրենց ձեռքում են պահել ողջ Ասիայի դրամական խոշոր գործատները։ Վենետիկի Ս. Մարկոսի տաճարի դրամատանում միայն Սահրատ Շեհրիմանեանը ունեցել է 700 հազար ոս-

կեայ դրամ (դուկատ)։ Վենետիկում մինչեւ այժմ էլ կանգուն է այն տունը, որ կոչւում է «Շեհրիմանեանց պալատ»։ Այս տոհմի նշանաւոր դէմքերից մէկն է եղել նաեւ Խոջայ Ջաքար Շեհրիմանեանը, պատմական այն անձը, որի ձեռքով Ջուզալի հայ վաճառականները 1660 թուին ոսկեայ ականակուռ դահ են ընծայում ռուսական Ալեքսէյ ցարին։ Յայտնի է նաեւ, որ Լէոպոլդոս կայսրը, հաշուի առնելով Շեհրիմանեանների ծառայութիւնները, 1669 թուին հրամանագրով նրանց ողջ տոհմին՝ սերնդէ սերունդ շնորհում է ազնուականութեան տիտղոս։ Նշանաւոր վաճառականներից բացի, այս տոհմը տուել է նաեւ աչքի ընկնող այլ գործիչներ։ Գասպար Շեհրիմանեան՝ թարգմանիչ-հրատարակիչ, Բարսեղ Շեհրիմանեան՝ Հոռմի քաղաքապետ, Մկրտիչ Շեհրիմանեան՝ փաստաբան, Պօղոս-Անտոն Շեհրիմանեան՝ աւստրիական կայսերական բանակի զօրավար, Մուրադ Շեհրիմանեան՝ պատմագիր, Ստեփանոս Շեհրիմանեան՝ բժիշկ-բժշկապետ եւ այլք։

Ջաքարիան, իբրեւ գրական խոշոր դէմք, առանձնանում է Շեհրիմանեան սերունդների աւելի քան 300ամեայ հարուստ պատմութեան մէջ։

Հայկական աղբիւրներում Ջաքարիա Շեհրիմանեանի անունը յիշատակում է Ղ. Ալիշանը եւ վերջինիս հետքերով՝ Հ. Աճառեանը «Անճառեանների քառաքան»-ում։ Իր «Հայ-Վեներտ» փաստաշատ աշխատութեան մէջ Ղ. Ալիշանը գրում է, որ Ջաքարիա Շեհրիմանեանի եւ ԺԸ. դարի դէպքերին հանգամանօրէն անդրադառնում է իր գրքի երրորդ մասի՝ Գ. Եղանակի մէջ. «Թէ՛ ասոր եւ Թէ՛ այս համառօտ ակնարկութեան մէջ ամէն նշանաւոր հայ վենետաց լիազոյն ծանօթութիւնն վերաբերի Գ. Եղանակին, եթէ երբեք ի լոյս ելանէ։ Բայց, որովհետեւ, շարունակում է նա, Ջաքարիա իր տեսակի մէջ եղական անձ մի ըլլալով եւ միակ մատենագիր կամ հեղինակ կոչման արժանաւոր ի համացեղան, քանի մի տող այլ նուիրենք իրեն ի ծանօթութիւն»։

Ղ. Ալիշանին չի յաջողւում տպագրել «Հայ-Վեներտ»ի Յրդ մասը։ Սակայն մեծ գիտնականի «քանի մի տող ծանօթութիւնը» բաւական էր, որպէսզի բանասէրը գտնէր այն ճանապարհը, որով անցել է Ջաքարիա Շեհրիմանեանը։

Ջաքարիան ծնուել է 1708 թուին, հաւանաբար, Վենետիկում, ուր նրա հայրը 1694 թուին տեղափոխուել է հայրենի Ջուլֆայից՝

4. Հ. Ղ. Ալիշան, Հայ-Վեներտ, Վենետիկ, 1897, էջ 509։ Ղ. Ալիշանը «Վիպառան եւ Երզնհան» Զ. Շեհրիմանեանին յիշում է նաեւ Լեհաստանի, Աւստրիայի եւ Հունգարիայի օտար լեզու գրականութեան մասին խօսելիս (Սիւսակամ, Վենետիկ, 1893, էջ 476)։

դրադառնում է թարգմանութեան հանգամանքներին: Թարգմանչի խօսքից յետոյ՝ անյայտ հեղինակը իր խօսքն է ուղղում ընթերցողին, թելադրելով իր բարոյագիտական սկզբունքներն ու նկատառումները: Տարիներ յետոյ, բացայայտում է գաղտնիքը եւ, ի գարմանս ընթերցողի, յայտնի է դառնում, որ վէպի հեղինակը բազմաթիւ երկերով Խալիլյանում ճանաչում գտած Ջաքարիա Շեհրիմանեանն է: Ղ. Ալիշանը այս վէպի մասին խօսելիս յիշատակում է նաեւ «կեղծ» բառը՝ «Կեղծ ճանապարհորդութիւն մը էնրիկո Վոլանդընի ի թագաւորութիւնս կապկաց եւ շանգլիսոց»:

2. Շեհրիմանեանի վէպի փոքրագիր չորս հատորներից իւրաքանչիւրն ունի շուրջ 500-600 էջ: Հատորները բաժանուած են գլուխների, առանց խորագրերի: Ամէն մի գլուխ ունի բովանդակութիւնից բխող երգիծական նկարագրողութիւններ: Վէպը երրորդ անգամ տպագրւում է 1848 թուին Վենետիկում, համառօտ տեսքով՝ մէկ հատորով, արդէն հեղինակի անունով՝ «Էմրիկոյ Վանտանի ճանապարհորդութիւնները դէպի կապիկների եւ շնագլուխների թագաւորութիւնները» - գործ՝ վենետիկցի Ջաքարիա Շեհրիմանի, նոր հրատարակութիւն, Վենետիկ, Սերաստիանոյ Դանթելիի տպարան, 1848 թ.»: Հրատարակչը համառօտելով վէպը, իւրաքանչիւր գլուխ դնում է համապատասխան վերնագրի տակ, իսկ սկզբում ներկայացնում է հեղինակին՝ «Վենետիկցի Ջաքարիա Շեհրիմանի կեանքը»: Երկրորդ հրատարակութիւնը բաժանուած է 64 գլուխների:

Ջաքարիա Շեհրիմանեանի ճանապարհորդական այս վէպը լայն ճանաչում է բերում հեղինակին: Եւ հենց դրանով էլ, ըստ երեւոյթի, սկսում է նրա կեանքի հալածական շրջանը՝ մոայլութիւնն ու թշուառութիւնը...

18րդ դարը իտալական գրականութեան մէջ համարւում է նոր շրջան: Վենետիկի հասարակապետութեան անկումը աստիճանաբար ուժեղացնում է գրականութեան իրապաշտական քննադատական ոգին: Ֆրանսիական գրականութեան ազդեցութեամբ, իտալական գրականութիւնը նշանաւորւում է նոր կատակերգութեան եւ դրամայի վերելքով, զարգանում է նաեւ քնարական նորաշունչ բանաստեղծութիւնը ու բարոյագիտական վէպը:

Դարի իտալական նշանաւոր գրողներ՝ Կարլոյ Գոլդոնիի, Կարլոյ Գոցցիի, Ջուզեպպէ Պարինիի, Վիտտորիոյ Ալֆիերիի, Գասպարէ Գոցցիի եւ այլոց ժամանակակիցն է Ջաքարիա Շեհրիմանեանը: Հարկաւ, նա իր պատմական թատերգութիւններով, փիլիսոփայական եւ գիտաբանական վերոյիշեալ երկերով դեռեւս շատ ուշագրաւ դեր չէր կատարում իտալական ժամանակակից գրականութեան մէջ, բայց, ահա, իր այս ճանապարհորդական, երգիծական վէպով նւաճում է մի նոր եւ քաջ գրական հրապարակ. «Թէ՛ քամաստեղծ ե-

գիր է, Թէ՛ փիլիսոփայ: Սուր մտօ՛ք՝ իր ժամանակին վեներալայ անկման (թէ՛ ըստ ուժոյ եւ թէ՛ ըստ բարոյականի) ընթացքը եւ գործող անձինքը դիտելով, եւ ուրիշ կերպ չկարեւորելով, երգիծանօք ուզեր է նշանակել եւ այն կերպով խրատել, բայց գգուշութեամբ եւ իր անունը ծածկելով»⁸, - գրում է Ալիշանը: Իտալական գրա-քննադատութիւնը առաւել բարձր կարծիք է յայտնում Ջաքարիայի մասին. նրա վէպը դիտւում է իբրեւ երգիծական, բարոյագիտական, քննադատական աննախատիպ ստեղծագործութիւն: «Դա քննադատական, դատական լաւագոյն վէպն է, որ երբեւէ գրուել է իտալերէն լեզուով: Նրա կեանքի շուրջ եղած տեղեկութիւնների սակաւութեան պատճառով կարելի է դիմել այս երեւակայական ճանապարհորդութեանը, որի մէջ մա մեզ երեւում է իբրեւ մի մարդ, որը երգուեալ թշմամի է ամէն տեսակ իմաստակութեան ու գրական ցուցամուտութեան եւ օժտուած է անբեւեակայելի սրամտութեամբ, խորաքափանցութեամբ եւ վառ երեւակայութեամբ»⁹: Երգիծական ամենաընդարձակ վէպն է այն - նշում է իտալական հանրագիտարանը - ուր ներկայացւում են ժամանակակից հասարակութեան գրեթէ բոլոր բարքերն ու գաղափարները¹⁰: Իտալական գրող՝ Եւ քննադատ Գասպարէ Գոցցին, որին սովետական գրականագէտ Բ. Գ. Ռէիզովը համարում է 18րդ դարի իտալական նշանաւոր լուսաւորիչ եւ բարոյագէտ, «տիպար գիտնական-քննադատ 18րդ դարի», չափազանց բարձր է գնահատում Ջաքարիա Շեհրիմանեանին. «Գրող Գասպարէն - կարդում ենք նոյն կենսագրականում - նրան ուղղեց իր ֆարագներից մէկը եւ յաճախ յիշատակեց նրա իմաստութիւնն ու փիլիսոփայական մտքի խորութիւնը»¹¹:

Իբրեւ իտալական ճանապարհորդական երգիծական-քննադատական վէպի առաջին հեղինակ, իբրեւ ժամանակի բարքերի այլասեւրումների դէմ ընդվզող մի անհատ, Ջաքարիան այնքան բարձր գնահատանքի է արժանանում, որ համեմատւում է 17-18րդ դարերի անգլիական հռչակաւոր գրող Ջոնսթան Սվիֆտի հետ եւ «Գուլիվերի ճանապարհորդութիւնը» դիտւում է իբրեւ նախատիպար Ջաքարիայի ճանապարհորդական վէպի: Այս վէպի մէջ, - գրում է Ղ. Ալիշանը, ելնելով Ջաքարիայի մասին գրաքննադատութեան իշխող կարծիքից, - նա «այնքան մարպկութեամբ կու ծաղրէ գիտունները, քաղաքագէտները, բժիշկները եւ այլն, որ քննաբանք գերագոյն դասած են գէտները, բժիշկները եւ այլն, որ քննաբանք գերագոյն դասած են գայն, քան զամենայն իտալացի փիլիսոփայական վիպասանութիւնս

8. Ղ. ԱԼԻՇԱՆ, Հայ-վենետ, Վենետիկ, էջ 508^թ

9. Զ. ՇԵՀՐԻՄԱՆԵԱՆ, Ճանապարհորդութիւն..., Վենետիկ, 1948, էջ 9:

10. Իտալական համալսարան, 1936, հատոր 31, էջ

11. Զ. ՇԵՀՐԻՄԱՆԵԱՆ, Ճանապարհորդութիւն, 1848, էջ 3:

եւ նախօրինակ Սվիֆտի «Գոլիվերի ճանապարհորդութեան»¹²: «Նա իր վէպի մէջ – գրում է առաջաբանի հեղինակը – ծաղրել է բարբերն ու գեղծումները, որոնք այսօր մասամբ վերացած են, բայց եւ գոյութիւն ունեն, եւ այդ վէպը օգտակարապէս կը կարդացուի այնքան ժամանակ, մինչեւ որ քերութիւնները կը դադարեն լինել մարդկութեան բնութիւնը»¹³: Իտալական գրա-քննադատութեան այս կարծիքը լրացնում է ինքը հեղինակը՝ ընթերցողին ուղղուած խօսքում: Այստեղ երեւում է նա իբրեւ մի որոնող, խուզարկու միտք, մի արտասովոր բնական անհատականութիւն, որն անհունօրէն սիրելով կեանքն ու մարդուն՝ ճանաչել է նրանց, եւ երբ խորացել է նրանց յարաբերութիւնների էութեան մէջ, տեսել է ամէնուր նոյն արտառոց կեղծիքը, բարբերի այլանդակում ու ապականութիւն եւ ցաւով ծաղրել դրանք: «Ես իրաւամբ կարող եմ կոչուել զարմանալի մարդ – գրում է Ջաքարիան – որովհետեւ այն բոլոր դէպքերը, որոնք անցել են իմ գլխով, եւ անընդմիջաբար յաջորդել են մէկը միւսին, եղել են բացառիկ եւ անհաւատալի: Իմ ապրած դժբախտութիւնների եւ բարեբախտութիւնների շարունակական վիճակը ինձ հասկանալ տուեց, որ ոչ մի կայուն բան չպէտք է սպասել աշխարհում... Ամենամեծ մշտնադարձութիւնը, որ ես հասկացայ, դա այն է, որ աշխարհից կարծես իսպառ վերացել են բանականութիւնը եւ մշտնադարձութիւնը, եւ որ երկմայիմ այդ լոյսերի տեղը այժմ բռնել են կեղծութիւնը, ստորաբարշտութիւնը: Ես տեսայ աշխարհը, ուսումնասիրեցի եւ ճանաչեցի այն: Ամէն տեղ բարբերը ըստ էութեան համանման են, եւ տարբերում են միայն արտաքինապէս: Ահա մի խօսքով իմ ճանապարհորդութիւններից եւ յայտնագործութիւններից քաղած պտուղը: Կապիկների եւ շնագլուխների երկրները, որոնք մինչեւ հիմա կարծուել են երեւակայական վայրեր, կը հաստատեն այս ճշմարտութիւնը. եւ որպէսզի իմ մի քանի բարեկամները իմանան այն ամէնը, ինչ ես իմացել եմ տեսնելով եւ տառապելով, ես ուզեցի նրանց հաղորդել իմ բազմաթիւ ճանապարհորդութիւններից այն բաները, որոնց հանդիսատեսն ու դերակատարն եմ եղել ես այդ երկրներում...»¹⁴:

Այս առաջաբանում մերթ խոյանում է հասարակական բարբերի հմուտ խուզարկուն, բարոյական անկման դէմ ըմբոստացած, աղտեղուած հասարակութիւնը փոխելու տենչով համակուած անհատը, մերթ էլ անարդար, անկայուն կեանքի արհաւիրքներից հողմածեծ,

12. Ղ. ԱԼԻՇԱՆ, Հայ-վեմետ, էջ 508 (անշուշտ, ոչ «նախօրինակ», այլ՝ նմանօրինակ, քանի որ Յովնան Սվիֆտի «Գոլիվերի ճանապարհորդութեան» առաջին հրատարակութիւնը եղել է 1726 թուականին, երբ Ջաքարիան դեռ հրապարակ չէր իջել որպէս գրող):

13. Համապարփադութիւն, 1848, էջ 4:

14. Համապարփադութիւն, 1848, էջ 4 («Հեղինակն ընթերցողին»):

յուսակորոյս, բախտի անորոշ քմահաճոյքին ենթարկուած, մոլորեալ ճանապարհորդը. բայց հենց այս հակասութիւնների մէջ ամբողջանում է Ջ. Շեհրիմանեանի բարոյագիտական ուսմունքը:

Ուշագրաւ է մեր հեղինակի կարծիքը գրական երկի լեզուի, ոճի ու արուեստի մասին. «Ես գրում եմ իբրեւ աշխարհիկ մարդ եւ ոչ իբրեւ գրչի մարդ – ասում է նա – նոյնիսկ եթէ գրչի մարդ լինեմ, ես չեմ կարող տուեալ պարագաներում գրել մշակուած ոճով, որը կը պահանջի այնքան աշխատանք եւ պարապ ժամանակ եւ այնքան ջանասիրութիւն, որոնք քնականաբար չեն կարող պահանջուել մի արկածախնդիր մարդուց: Իմ առաջացած տարիքի վերջին շրջանում շատ ծիծաղելի կը լինէր, եթէ գրադուէի դարձուածքների եւ բաների յարդարումով: Վստահ եմ, որ իմ ընթերցողների մէջ չեմ գտնի այնպիսի անխոհեմ մարդիկ, որոնք ինձ մեղադրէին նման թերութիւնների համար. եթէ կը լինեն այդպիսիք, չեմ մտահոգուի դրա համար. թող նրանք բարբաջն ինչքան ուզեն: Ես գրել եմ պատահաւոր համար եւ ոչ թէ գրաւելու պերճախօսութեամբ»: «Հաճելի մեղու համար եւ ոչ թէ գրաւելու պերճախօսութեամբ»: «Հաճելի են ինձ չպիտի լինեմ ամէն ընթերցողի եւ ունկնդրի եւ ոչ էլ հաճելի են ինձ չպիտի լինեմ ամէն ընթերցող եւ ունկնդիր», նշում է նա իր վէպում՝ իբրեւ բնաւոր: «Դու, որ կարդում ես այս գրքերը, կը պարսաւեմ միամտութեամբ, եթէ բոլոր գրածներս փառաբանես, եւ նախանձը՝ եթէ ոչինչ չփառաբանես»: «Բաւական են ինձ քիչ ընթերցողներ, բաւ է եթէ մէկը լինի, իսկ եթէ ոչ ոք ինձ կարդայ, ոչ ոք բաւական պիտի լինի»:

Ջ. Շեհրիմանեանը գրել է նաեւ տաղաչափեալ հէքեաթներ, որոնցից մեկ յայտնի է մէկը՝ «Հեյելին» խորագրով: Հարկաւ, այս բոլորը չէ: Յետագայ պրպտումները լուսաւոր նոր էջ կը բացեն...:

«Ես կատարել եմ ուրիշ եւ ոչ նուազ հետաքրքիր ճանապարհորդութիւններ – գրում է հեղինակը – եւ եթէ ունենամ կեանք եւ առողջութիւն, մտադիր եմ դրանց մասին եւս մի բան հրատարակել: Առ այժմ ընթերցողը թող ընդունի իմ բարի մտադրութիւնը, հասարակութեանը հաղորդելու իմ յայտնագործութիւնները եւ թող մեծահոգութեամբ ների իմ թուլութիւնները»: Գրե՞լ է արդեօք նա իր երկրորդ «Ճանապարհորդութիւնը» ստոյգ չենք կարող ասել: Այս միտքը յայտնելուց յետոյ նա ապրել է եւս 20 տարի:

Անկարելի է, որ ստեղծագործական այսպիսի արտասովոր տարերքի տէր գրողը այլեւս գրած չլինի: Մենք դեռ չգիտենք, թէ ո՞ր տեղ են պահուում նրա աւարտուած եւ թերի երկասիրութիւնների ձեռագրերը, ո՞րտեղ է նրա դիւանը:

Ջաքարիա Շեհրիմանեանի երկերից թարգմանուել են նաեւ իսպաներէն եւ անգլերէն: 1961 թուականին, Մանչեստրում, դոկտոր Մաքսվել Ուայտը հրատարակում է «Ջաքարիա Սեհրիմանը եւ ինրիկոյ Վանտոնի ճանապարհորդութիւնները» խորագրով, մեկ անծանօթ,

գերբը, ուր, իբրեւ յաւելուած, ներկայացուած են նաեւ Զաքարիայի մանր երկերը եւ նամակները:

Մխիթարեաններին ժամանակակից, վեհատահայ միջավայրում կրթուած ու դաստիարակուած, Շեհրիմանեան ազգատոհմի ժառանգ Զաքարիան դժուար է թէ հայերէն որեւէ բան գրած չլինի: Հարկաւ, եթէ գրած էլ չլինի, չի նուազի նրա մեծագոյն ծառայութիւնների արժէքը....:

Իտալական նոր ժամանակների բանաստեղծ, վիպասան, երգի-ծաբան, փիլիսոփայ, դրամատուրգ հայազգի Զաքարիա Շեհրիմանեանի երեւան գալը նշանակալից երեւոյթ է 18րդ դարի իտալա-հայկական յարաբերութիւնների պատմութեան մէջ:

Մենք համոզուած ենք, որ Զաքարիա Շեհրիմանեանին նուիրուած այս սեղմ ակնարկը առիթ կը ծառայի նրա ընտիր երկասիրութիւններից մի քանիսը հայերէն թարգմանութեամբ հրատարակելու: Դա կը լինի ժողովրդի յուշարձանն իր արժանաւոր գաւակին՝ 18րդ դարի իտալահայ նշանաւոր գրող Զաքարիա Շեհրիմանեանին, որն իր արդիւնաւոր կեանքի վերջին տարիներն ապրեց մուսուլմանական ու թշուառութեան մէջ եւ թաղուեց առանց իսկ տապանադրի, որով գէթ Ս. Կանցիանոսի եկեղեցին յիշատակէր նրա անունը....:

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ

Բանասիրական գիտութիւնների Դոկտոր

Երևան

ՃՇՏՈՒՄՆԵՐ

ԵԶՆԻԿԻ ՄԻ ՆՈՐ ԱՂԲԻՒՐ

Բելգիայի Լուվէն քաղաքում հրատարակուող «Le Muséon» արեւելագիտական հանդէսի 86րդ հատորի 3-4 միացեալ պրակներում (էջ 341-363) 1973ին լոյս տեսաւ «A propos d'un passage d'Eznik (P. 241)» խորագրով բանավիճական մեր յօդուածը, որ յաջորդ տարին «Բազմավէպ»ի 1-2 միացեալ համարում (էջ 106-128) հրատարակեցինք նաեւ հայերէն (առանց բառացիօրէն թարգմանելու), «Եզնիկի մի հատուածի մասին» վերնագրով: 1924-1928 թուականներին այդ հատուածը վէճ յարուցեց Հրաչեայ Աճառեանի եւ Փրանսացի հայագէտ Լուի Մարիէսի միջեւ: Առաջինը պնդում էր, թէ նըսացի հայագէտ Լուի Մարիէսի միջեւ: Առաջինը պնդում էր, թէ նըսացի հայագէտ Լուի Մարիէսի միջեւ: Պղատոնին, եւ հետեւաբար Եզնիկի բանում խօսքը վերաբերում է Պղատոնին, եւ հետեւաբար Եզնիկի երկի այդ տեղում ամբողջ մի «գրքի» թերիք կայ ձեռագրում, որ, ինչպէս գիտենք, մէկ հատիկ է: Իսկ Մարիէսն ընդհակառակը պնդում էր, թէ այդ տեղում Եզնիկը նկատի ունի Մարկիոնին, եւ հետեւաբար ձեռագրում պակաս չկայ: Մանրամասնութիւնները տես մեր յօդուածում:

Հատուածը քերականական եւ ընդհանուր իմաստային վերլուծութեան ենթարկելով եւ երկու բանասէրների փաստարկումները մանրամասն քննարկելով՝ յանգեցինք այն եզրակացութեան, որ Մարիէսի կարծիքը միանգամայն անընդունելի է մեզ համար, իսկ Աճառեանի պնդման առաջին կէտն է միայն ստոյգ. Եզնիկն իրօք խօսում է Պղատոնի մասին. իսկ ինչ վերաբերում է նրա ենթադրութեան, ապա հակուած ենք կարծելու, թէ Եզնիկը Պղատոնի դէմ մի ամբողջ «գիրք» չի գրել, որ իբր կորել է: Յամենայն դէպս միակ ձեռագիրը չի կարող որոշիչ լինել այս խնդրում:

Վերջերս «Le Muséon» հանդէսի 87րդ հատորի (1974) 3-4 միացեալ համարում բանավէճին միջամուխ եղան երկու բանասէրներ՝ նոր փաստի հիման վրայ, որ միաժամանակ Եզնիկի մի նոր աղբիւրն է:

Միչել Վան Էսբրոեկ (Michel Van Esbroeck) հայագէտը եւ Մարսել Ռիչարդ (Marcel Richard) նկատել են մեր յօդուածն ընթերցե-